№ 208 Նոյեմբերի 28 (Դեկտեմբերի 10) 1879 Նոյեմբերի 28 (Դեկտեմբերի 10) № 208

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 թվին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամմն նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տխուր և ուրախալի համբաւներ։—Ներքին տեսութիւն։ Իմ պատասխանը։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։ —«Մշակի» հեռագիրներ։ —Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Հայ երիտասարդութիւնը։

ՏԽՈՒՐ ԵՒ ՈՒՐԱԽԱԼԻ ՀԱՄԲԱՒՆԵՐ

—

Նորերումս հրատարակվել է Կ. Պոլսի մէջ, «L'article 61 du traité de Berlin» բրոշիւրի երկրորդ մասը։ Բրոշիւրը յիշեցնում է սկզբից թէ ինչ է խոստացել հայերին Բերլինի կոնգրէսը և թէ ներկայ թուի յունվար ամսին, երբ հրատարակվեցաւ նոյն բրոշիւրի՝ առաջին մասը, ինչ էր ասում գրքոյկի հեղինակը։ Մենք երջանիկ կը լինէինք, ասում էր նա, ստիպված չը լինել նոր հարստահարութիւնների մասին դարձեալ տեղեկութիւններ հրատարակելու, բայց խիստ վախենում ենք որ իրողութիւնները մեզ կը ստիպեն մօտիկ ապագայում աւելացնել եղած փաստերին նոր և նոյնքան սարսափելի փաստեր Հայաստանի թշուառ դրութեան մասին։

Արդարէութիւնը կատարվեցաւ։ Գրքոյկը դարձեալ լի է թիւրքաց հայերի վրա գործված սարսափելի հարստահարութիւնների և բարբարոսութիւնների նկարագրութիւններով։

Եւ այդ թշուառութիւնների լուրերը հաղորդվում են Հայաստանի ամեն կողմերից։

Թիւրքաց Հայաստանի քրիստոնեայ բնակիչների դրութիւնը օրից օր աւելի և աւելի անտանելի է դառնում...

Մի բան միայն ուրախալի է, մի բան միայն մխիթարում է ընթերցողին ամբողջ գրքոյկը կարդալուց յետոյ, այդ այն է, որ չը նայելով թիւրքաց կառավարութեան ջանքերին ցոյց տալ Հայաստանի աղգաբնակութեան պաշտօնական ժողովրդագրութեան միջոցով, որ մահմետականները քրիստոնեաներից աւելի բազմաթիւ են, —դարձեալ այդ նենգաւոր ջանքերը իրան չեն աջողվում։ Չը նայելով թիւրքաց կառավարութեան կեղծ վիճակագրութեանը, դարձեալ հաստատվում է, որ հայերը Հայաստանում աւելի բազմաթիւ են, քան թէ մահմետականները։

Ուրիշ կողմից Կ. Պոլսի մեր մշտական թղթակից պ. Հայկակ, որի նամակը շուտով կը տպենք, հաղորդում է մեզ մի շատ ուրախալի լուր։

Օէյթունը, փոքրիկ և քաջ Օէյթունը, զէնքը ձեռին և իր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

—

Վեր առնենք մշակ դասը։

Թիֆլիսի հայոց ժողովրդաբնակութեան մէջ իսկապէս մշակ դաս չը կայ։ Այն մշակները, որոնք փաղանը ուսներին դրած, լցնում են այդ քաղաքի հրապարակները, բոլորը գաղթականներ են, Պարսկաստանից, Տաճկաստանից, կամ Հին-Նախիջևանի և Երևանի գաւառներից այստեղ եկած։ Չէ կարելի երևակայել մի աւելի տաժանական աշխատութիւն, քան թէ այն, որ կատարում են այդ մշակները։ Դրանք ընդհանուր անունով կոչվում են «համալներ»։ Համալի վիճակը և բեռնակիր գրաստի վիճակը ոչինչով չեն տարբերվում միմեանցից, երկուսն էլ ծանրութիւններ են կրում։ Թիֆլիսի քարվանսարաների, մաքսատան, երկաթուղու կայարանի, հրապարակների բոլոր համալները հայեր են։ Օտարազգիները չնչիփոքրամասնութիւն են կազմում։ Աշխատութիւնների տեսակները զանազան են. ոմանք բեռնակրութիւն են անում, տեղափոխում են ահագին, երբեմն 10—15—20 փութի ծանրութեամբ հակեն և տակառներ։ Հսկայի ուժ և մկնակների սաստիկ զօրութիւն պէտք է այս գործի համար, բայց հայ համալը տանում է փայտով ամրացրած մէջքի վրա իր բեռը որպէս մի թեթև փետուրեայ բարձ։ Ոմանք, որ կազմուածքով աւելի թոյլ են, կթոցների մէջ տներից աղբ են դուրս տանում և թափում են Կուր գետի մէջ, կամ աւելում են փողոցների անմաքրութիւնները։ Ոմանք ջրկիրներ են, փոքրիկ թուլուխների մէջ, որ քարշ են տալիս ուսից, ջուր են բերում աղքատ ընտանիքների համար։ Ոմանք բանում են տների չինուածքների վրա, խճուղիների և երկաթուղու վրա որպէս հասարակ մշակներ, կամ աշխատում են աղիւսի գործարանների մէջ, և կամ քարափից քար են կարում։ Երկար կը լինէր մի առ մի թուել այդ թշուառների անտանելի աշխատութիւնների զանազան տեսակները, որոնց կարող էր համբերել միայն այն անբախտը, որին դառն աղքատութիւնը ստիպել էր թողնել իր հայրենիքը, տունը, ընտանիքը, և պանդխտութեան մէջ յանձն առնել մի անասնական գործ։

Համեմատաբար աւելի երջանիկ են այն մշակները, որոնք խմբված են զանազան քարվանսարաներում։ Իւրաքանչիւր քարվանսարայի մէջ մշակների խումբը կազմում է մի տեսակ միութիւն «օդաբաշիի» *) գլխաւորութեան ներքոյ։ Դրանք ունեն իրանց ընդհանուր դրամարկղը (կասսան), որի մէջ ձգում է ամեն մէկը իր օրեկան վաստակը, ծախսում են այդ դրամարկղից, կերակրվում են միասին, և ամեն մի ամսի վերջը բաժանում են իրանց մէջ փողի մնացորդը։ Հիւանդ ընկերը չէ զրկվում իր բաժինից, եթէ ամբողջ ամիսը աշխատած ևս չը լինէր։ Մի նոր մշակ ընդունվում է խումբի մէջ ամենի համաձայնութեամբ։ Բոլոր այս տեսակ հիմնարկութիւնների մէջ աշխատող մշակները մի տեսակ ապահովութիւն ունեն, այն կողմից, որ առանց գործի չեն մնում, այլև փոխադարձապէս օգնում են միմեանց։ Մինչդեռ միւս մշակները ստիպված են ամեն օր և ամեն րոպէ գործ պտռել։ Շատ անգամ ամբողջ ժամերով նրանք կանգնած են հրապարակների և փողոցների վրա, սպասում են, մինչև մէկը կը կանչէր և մի շալակ կը յանձնէր այս և այն տեղը հասցնելու համար։

Ամբողջ օրվայ դառն չարչարանքներից յետոյ մշակներից շատերը աշխատում են գիշերից ևս օգուտ քաղել։ Հանգստութիւնը զոհում են մի քանի կոպէկների։ Ում չէ պատահել տեսնել, գիշերը փողոցներով անցնելիս, մագազինների դրանը, մերկ սալերի վրա, ձիւնի և անձրևի տակ պառկած «հասամներին» (գիշերապահ)։ Դրանք ցերեկը աշխատող մշակներն են։ Երբեմն նրանք այն աստիճան յոգնած և թմրած են լինում, որ գիշերվա քէֆից վերադարձող բուրժուան ոտքը կոխում է նրանց վրա և անց է կենում. թշուառները ոչինչ չեն զգում։ Իսկ երբեմն կը տեսնէք մէկին, փաթաթված սօղաթի քրքրված վերարկուի մէջ, դառն-մելամաղձական ձայնով երգում է։ Քունը մօտ չէ գալիս կարօտ աչքերին, նա երգում է իր «եարին», որին դեռ նոր էր նշանել, երբ թողեց հայրենիքը. այժմ անցել էին մի քանի տարիներ, անբախտ մշակը դեռ ևս այնքան փող չէր վաստակել, որ վերադառնայ, պարտքերը վճարէ, յետոյ կարողանայ պսակվել։

Ում պատահել է մտնել Սաղի կողմի քարվանսարաներից մէկի մէջ, ուր կանգնեցնում են ֆուրգօններ, կարող է փոքր ի շատէ գաղափար ստանալ մշակների կեանքի մասին։ Թիֆլիսի այդ մասը, ուր թափում են ամեն տեսակ անմաքրութիւններ, ուր գարշահոտութիւնը թմրեցնում է մարդուն, ուր խոզերը միայն աղտոտութիւնների մէջ բախտաւոր են ապրում,—Թիֆլիսի այդ դժոխքը մշակների գիշերային կացարանն է։ Այնտեղ կարելի է գտնել փոքրիկ մթին սենեակներ, որ ամիսը 3—4 ռուբլով վարձով են տալիս. երբեմն 10—20 մշակներ վարձում են այդ սենեակներից մէկը։ Ոչ մի կարասի չէ կարելի տեսնել այդ խոնաւ և սառն գերեզմանների մէջ, ուր կարմիր աղիւսով ծածկված մերկ յատակի վրա, Իրանց փալանները բարձի տեղ գլխների տակին դրած, գիշերը հանգստանում են մշակները ցերեկվայ յոգնածութիւնից յետոյ։ Ոմանք այնքան խնայող են լինում, որ սենեակներ չեն վարձում, այլ մտնում են այս և այն քաղաքացու տանը որպէս դռնապան (дворникъ), գիշերը հսկում են դրան վրա, իսկ ցերեկը գնում են իրանց գործին։ Ցանուցիրը այնքան բարի է լինում, որ խեղճ մշակի աշխատութեան փոխարէն ձրի տալիս է նրան օթևանելու մի խորշ. դա լինում է ըստ մեծի մասին ներքնատան մի անպէտք անկիւնը։

Թիֆլիսի մշակների մէջ մի աւելի հետաքրքիր մաս ներկայացնում են թուլուղչիները (ջրկիրներ). դրանք կազմած ունեն մի տեսակ համայնք, որ ունի իր կանոնները և սովորութիւնները։ Թիֆլիսի բոլոր թաղերը բաժանված են (թուլուղչիների կարգադրութեամբ) զանազան մասների, որոնց իւրաքանչիւրը մի թուլուղչու «մուչտարին» է. այսինքն, բացի այն թուլուղչուց մի ուրիշը իրաւունք չունի այն թաղեցոց ջուր տալու։ Այդ իրաւունքը վաճառվում է թուլուղչիների մէջ. օրինակ, մէկ թաղում հարիւր ընտանիքի ջուր էր տալիս մէկ թուլուղչի, նա իր դաֆթարի մէջ ունի տների ցուցակը, և նոյն ցուցակով վաճառում է իր ջուր տալու իրաւունքը միւսին, ստանալով նրանից 500—1000 ռուբլի։ Եւ այսպէս ժողովուրդը անցնում է մի թուլուղչու ձեռքից միւսին։ Թուլուղչիները իրանց մէջ կարգ պահպանելու համար, ընտրում են մէկին իրանց միջից որպէս ռուստաբաշի—գլխաւոր, որը ճանաչված է լինում և քաղաքական վարչութիւնից։ Թիֆլիսի մշակների մէջ միայն թուլուղչիներն են, որ ազատ են հարկից, որովհետև, նայելով այն ծառայութեանը, որ նրանք կատարում են հրդեհների ժամանակ, առանց որ և իցէ վարձատրութեան,—քաղաքը նրանցից հարկ չէ պահանջում։ Հէնց որ մի տեղ հրդեհ է յայտնվում, քաղաքի ամեն ծայրերից թուլուղչիները թափվում են խլկոյն։ Զարմանալի է տեսնել, թէ որպիսի անձնազոհութեամբ այդ քաջերը նետվում են կրակի մէջ. ոչինչ նրանց չէ վախեցնում, ոչինչ նրանց չէ վհատեցնում։

Թուլուղչիները Պարսկաստանի Սալմաստ գաւառից եկած կաթոլիկ և լուսաւորչական հայեր են, նրանց մէջ գտնվում են և աստրիներ։ Բոլոր մշակների մէջ դրանք են, որ պահպանում են մի կազմակերպված միութիւն, և այդ միութեանն են պարտական, որ ունեն համեմատաբար աւելի լաւ

---

*) Օդաբաշի նշանակում է խանութպան։

արիւնի գնով պաշտպանելով իր իրաւունքները Ռ. Դրան կամայականութեան դէմ, ստացել է վերջապէս իր ինքնավարութիւնը: Ուրեմն, չը նայելով տան և ինն երորդ լուսաւորված դարի մարդասէր գաղափարներին, փոքրիկ, լեռնոտ Ջէյթունը զէնքով և արիւնով աւելի շուտ կարողացաւ ձեռք բերել իր ինքնավարութիւնը քան թէ Թիւրքաց Հայաստանի ամբողջ մնացած մասը իր անվերջանալի բողոքներով և գանգատներով:

Լուրը ինքն իրան ուրախալի է և մենք թողնում ենք մեր թղթակցին նրա մանրամասները ընթերցողին պատմելու, բայց ցաւալին այն է, որ դեռ կան մեր լուսաւորված դարում թիւրքիայի պէս երկիրներ, որտեղ մարդկային ամենաանհրաժեշտ իրաւունքները կարելի է ձեռք բերել միմիայն արիւնով և սրով, որտեղ խաղաղ, կուլտուրական, ազնիւ կռիւը դեռ ևս թուլութեան և վախկոտութեան նշան է համարվում: Երևում է որ դեռ ևս կան տեղեր երկրագնտիս վրա, որտեղ իր անձը իր թշնամուն յարգել տալու համար, պէտք է կռվիտ, բռնի ոյժ ցոյց տալ, պէտք է արիւնահեղ ապտակներ հասցնել իր թշնամուն:

Գոնէ այժմ Թիւրքաց Հայաստանը մի կտոր գետին կունենայ, ուր հայը ապահոված կը լինի հաստատարող բռնի ոյժի, վայրենի կամայականութեան դէմ:

Եւ ինչպէս փոքրիկ Ղէրնօգորիան Ռալկանեան քրիստոնեաների, սլավեանների համար ազատութեան խմոր դարձաւ, այնպէս էլ այժմ, երբ Ջէյթունի ինքնավարութիւնը կատարված իրողութիւն է դարձել, կարելի է յուսալ որ և Ջէյթունը կը դառնայ ոչ թէ միայն Թիւրքաց Հայաստանի, բայց և ամբողջ Փոքր-Ասիայի քրիստոնեայ ազգաբնակութեան ապագայ ազատութեան խմորը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Երբ որ մի տարի առաջ ես սկսեցի շինել Թատրոնը, ամենքը հիացած էին: Տեղական ռուս լրագրութիւնը, որ աշխատում է այժմ յարձակվել իմ Թատրոնի վրա, այն ժամանակ պաշտպանում էր ինձ: Շինութեան կառուցանելու ժամանակ շատերը գալիս էին և զոհ էին երևում թէ Թատրոնի բէղոնանսից (երաժշտական արձագանք), թէ տեղերի դասաւորութենից, թէ բեմից, և այլն: Այդպէս էին վերաբերվում դէպի իմ Թատրոնը թէ հայոց կոմիտէի այժմեան անդամները, թէ իմ ուրիշ ծանօթները: Ես յիշում եմ որ իմ ծանօթներից մինը մինչև անգամ խօսք գցեց իմ Թատրոնը կապալով վեր առնելու վրա...

Վերջապէս սկսվեցան կօնցէրտներ: Առաջին կօնցէրտ տուեց Ս. Պետերբուրգի նշանաւոր ռուս երգչուհի տիկին Մէնշիկովա, նրանից յետոյ երեք կօնցէրտ տուեց պ. Վէնիավսկի: Այն ժամանակ (վեց ամիս սրանից առաջ), ոչ ոք չէր ասում թէ բէզօնանսը վատ է: Ընդհակառակն թէ հասարակութիւնը և թէ երաժիշտները զոհ մնացին դահլիճի ակուստիական յատկութիւններից: Տիկին Մէնշիկովա ինձ անձամբ ասեց թէ շատ հաճելի էր պատահել ամբողջ Ռուսաստանում մի Թատրոնական դահլիճ այդ տեսակ գեղեցիկ ակուստիկայով: Ինչպէս է պատահել որ այն Թատրոնը, որ Վենեավսկու կօնցէրտների ժամանակ այդքան գեղեցիկ ակուստիկա ունէր, յանկարծ վեց ամսից յետոյ կորցնում է իր առաջվայ յատկութիւնը, ինչպէս հաւատացնում է այժմ «Тифл. Вѣстн.» լրագրի բէցէնզէնտը:

Ես կարծում եմ որ աւելի իրաւունք ունեմ հաւատալ Մէնշիկովային, Վէնիավսկուն և այժմ տ. Արտօին, որոնք զոհացուցիչ էին գտնում Թատրոնի ակուստիկան, քան թէ տեղական ռուս լրագրի բէցէնզէնտին:

Բայց այժմեան յարձակումների դաղտնիքը ի՞նչումն է...

Իմ Թատրոնը հասարակ գներով տալիս է մօտ 500 բուբլ գիշերվայ ամբողջ արդիւնք, իսկ պ. Պալմի Թատրոնը նոյն գներով տալիս է 700 բուբլ: Աւելացած գներով, այսինքն այն գներով, որ Վենիավսկին կամ այժմ տ. Արտօ է նշանակել, իմ Թատրոնը տալիս է 1000 բուբլ, ուրեմն նոյն գներով պ. Պալմի Թատրոնը կարող է տալ 1400, դիցուք շատ շատ՝ 1500 բուբլ: Բայց ես աւելացած գների ժամանակ վերցնում եմ միայն 100 բուբլ իսկ պ. Պալմ, պահանջում է գիշերվայ վարձ 300 բուբլ: Ուրեմն այդ վարձը կարելի էր պահանջել միայն այն ժամանակ, եթէ ամառվայ Թատրոնի գիշերվայ ընդհանուր արդիւնքը երեք անգամ աւելի լինէր, այսինքն 3000 բուբլ: Բայց մենք ասացինք որ նոյն գներով նա կարող է տալ շատ շատ 1500 բուբլ արդիւնք: Ուրեմն պ. Պալմ իր Թատրոնից նոյն աւելացած գներով արդիւնքից կարող էր վեր առնել 150 բուբլ: Բայց նա հայերից և վրացիներից, որոնք կարող են ընդամենը 700 բուբլ գիշերվայ արդիւնքի վրա հաշվել, վերցնում է 200 բուբլ գիշերվայ վարձ:

Նոյեմբերի 22-ին, տիկին Արտօի և պ. Պագիլլայի երկրորդ կօնցէրտի ժամանակ, մի պարոն մնտենում է իմ գործակատարին և ասում է՝ «Ամօթ չէ՞ որ այդ տեսակ երևելի երգիչներ երգում են այդ տեսակ Թատրոնում: Եթէ նրանք անցնէին Ամառվայ Թատրոնը, ես հաւատացած եմ, որ Պալմ կը վերցներ նրանցից 200 բուբլ կամ մինչև անգամ 150 բուբլ և Թատրոնը լի կը լինէր:»

Չը գիտեմ պարոնը արդեօք դէպի պ. Պալմի ունեցած բարեկամութեան զգացմունքից դրդված աշխատելիս է եղել քաշել տ. Արտօին դէպի Պալմի Թատրոնը, կամ նա անկեղծաբար համակրում է նշանաւոր երգիչներին որոնք երգում են ակուստիկա չունեցող Թատրոնում...

Եթէ պարոնը այնքան բարեկամ է պ. Պալմին, որ կարող է համոզել նրան Արտօից 200 կամ մինչև անգամ 150 բուբլ վերառնել, եթէ նա այդքան հոգում է տիկին Արտօի և պ. Պագիլլայի մասին, ինչի նա իր ամբողջ ազդեցութիւնը չէ գործ դնում պ. Պալմի վրա որ համոզի նրան հայոց մշտական խմբի կոմիտէից վեր առնել 200 բուբլուց պակաս, աչքի առջև ունենալով որ հայերը խաղում են շաբաթը մի անգամ և ինչքան էլ լի լինի Թատրոնը, երբէք չեն կարող 700 բուբլուց աւելի գիշերվայ արդիւնք ունենալ:

Ինչո՞վ բացատրել որ Պալմ, որ 700 բուբլ արդիւնքից 200 բուբլ վարձ է վերցնում, —պատրաստ է պարոնի ասելով, Արտօի կօնցէրտից, որ բարձր գներին նայելով 1500 արդիւնք պէտք է տայ, վեր առնել միայն 150 բուբլ....

Երբ որ իմ Թատրոնը արդէն պատրաստ է և այնու ամենայնիւ Պալմ պահանջում է ամեն գիշերվայ համար 300 բուբլ, ուրեմն ի՞նչ կը լինէր եթէ բացի Պալմի Թատրոնից ուրիշ Թատրոն չը լինէր ամբողջ Թիֆլիսում. երևի այն ժամանակ նա 400, մինչև անգամ 500 կը պահանջէր Ռուսաստանից և արտասահմանից եկած նշանաւոր արտիստներից:

Պարզ է որ այն ժամանակ ոչ ոք չէր գայ

վիճակ: Կուկիայի Զուխուրէթ կոչված թաղում կարելի է տեսնել թուլուղչիների հիւրանոց, ուր նրանք ընթրիք են ուտում, խմում են և ծխում են պարսկական ղէյան: Բացի թուլուղչիներից մնացած բոլոր մշակները մի տեղ չունեն հաւաքվելու համար: Եթէ, ինչպէս վերևում նկատեցի, Թիֆլիսում չը կան այնպիսի հիւրանոցներ, ուր արհեստաւորները կարողանային էժան ճաշ ուտել, —չէ կարելի երևակայել անգամ, որ այս տեսակ հիմնարկութիւններից օգուտ քաղէին մշակները: Այդ ողորմելիները կեակրվում են միայն ցամաք հացով. հրապարակի վրա գնում են մի հատ վրացու «պուրի», և այնպէս կռծելով, ծանր չալակի տակ, չարունակում են իրանց գործը: Մշակը, որ ղուլիքը դնելու մի անկիւն չունի, ինչպէս կարող է իր համար առանձին խոհանոց սարքել: Կիրակի օրերը միայն մի քանիսը ընկերանում են միասին, առնում են մի կտոր միս, և տալիս են փուրունչին եփելու համար: Այդ աշխատող դասը, որ աւելի ուտելու պէտք ունի, բոլորովին զուրկ է մնում զօրացնող մնունդից: Որ և իցէ զուարճութիւնից նոյնպէս զուրկ են մնում նրանք. երբեմն ուրեմն օրերում մտնում են մի գինետուն և խմում են մի քանի բաժակ արաղ. ալքօգոլը միայն կարողանում է դրգռել մշակի բթացած և անզգայացած ջղերը:

Մի քանի խօսք մշակների մտաւոր կեանքի մասին: Մեր մէջ կան ազգասէրներ, որոնք երազում Մուշի, Վանի և Զէյթունի վրա, բայց այստեղ, Թիֆլիսում, մէջեցի և վանեցի հայի զաւակները իրանց աչքի առջև չեն տեսնում: Մեզանից դեռ ոչ ոք չը մտածեց հիմնել մշակների համար կիրակնօրեայ դասախօսութիւններ և ծանօթացնել նրանց տնտեսական որ և իցէ հարցի հետ: Ախար այդ թչուառները առանց պատճառի չէ, որ թողել են իրանց հայրենիքը և այստեղ պանդխտութեան մէջ տարիներով մաշվում են: Պէտք չէ արդեօք քննել այն պատճառները, որ դուրս են քշում նրանց իրանց հայրենիքից, և ցոյց տալ ապրուստի ուղիղ ճանապարհը: Մշակների մէջ կան մեծ թւով գրագէտներ. այսպիսիները ուրիշ երկրում օգուտ են քաղում կօպէկանոց լրագիներից, բայց այստեղ կարդալու ոչինչ չեն գտնում: Թողնենք մտաւոր մնունդը: Թիֆլիսի հայ մշակները զուրկ են մնում և բարոյական և հոգևոր մխիթարութիւնից: Ոչ մի հայ քահանայ չէ բաց անում մշակի խղճուկ օթեանի դուռը, որովհետև նրանից չահվելու ոչինչ չէ սպասում: Բայց լինի յայտնի են փաստեր, որ Պարսկաստանից այստեղ եկած փոքրաթիւ բողոքական մշակների համար՝ Ուրմիայ ամերիկական առաքելութեան միսսիօնարները իրանց ծախսով ուղարկել են Թիֆլիս մի քարոզիչ քահանայ, որ միշտ այստեղ է մնում, և թէ հոգևորապէս, թէ բարոյապէս մխիթարում է նրանց: Ամեն կիրակի հաւաքում է նա իր փոքրիկ հօտը գերմանական կօլօնիայում մի յատկացրած տեղ, և քարոզ է կարդում: Այդ բաւական չէ, քահանան իսկոյն վազում է բժիշկի մօտ, երբ մէկը հիւանդ էր, և խնամք է տանում նրա առողջութեան մասին, եթէ աղքատ էր: Բայց մեր հայ մշակները հիւանդանում են և անտէրութիւնից ճանճերի նման ամեն տարի հարիւրներով մեռնում են, ոչ ոք նրանց վրա չէ մտածում: Այդ ողորմելիները մինչև անգամ չը գիտեն, որ Թիֆլիսում կայ այնպիսի տեղ, ուր բժիշկները ձրի են նայում հիւանդին (лечебница), և կայ այնպիսի տեղ ևս, ուր հոգ են տանում աղքատներին ձրի կերակրելու և առողջացնելու համար (больница):

Կայ մի ուրիշ կէտ ևս, որ ոչ սակաւ ուշադրութեան արժան է: Թիֆլիսում կարելի է հաշվել միջին թւով մինչև 5000 հայ մշակներ, որոնք օտար երկրներից են եկած: *) Դրանք երբեմն մինչև տասն տարի չարունակ մնում են այստեղ, անդադար աշխատում են, փող են վաստակում, բայց չը գիտեն թէ որտեղ պահեն իրանց դառն քրտինքի գինը: Մշակի գանձարանը կաչից իր ձեռքով կարած փոքրիկ պայուսակն է, որ միշտ կարելի է տեսնել նրա կողքից քարշ ընկած: Բայց քիչ չէ պատահում, որ քնած ժամանակ նրա պայուսակը կըտրում են, և մշակը զրկվում է իր գանձից, իր մի քանի տարվայ դառն աշխատանքից: Ոմանք ծանօթանում են մի քաղաքացու հետ և փողերը նրան պահ են տալիս, առանց վէքսիլի և առանց թղթի. և խղճմտանքով քաղաքացին չատ անգամ կամ ուրանում է «հօրի» յանձնած փողերը, և կամ վայրիվերոյ հաշիւներ է ցոյց տալիս: Վերջապէս այդ ողորմելիները չը գիտեն, թէ իրանց վաստակած փողերը ինչ միջոցով կարող են ապահով կերպով հասցնել իրանց հայրենիքը, իրանց կարօտ ընտանիքներին: Ըստ մեծի մասին այսպէս են անում. մի քանի տարվայ վաստակածը հաւաքում են մի տեղ, փոխում են ռուսաց ոսկու հետ, և 40—50 հոգի միասին խմբվելով, դիմում են դէպի իրանց հայրենիքը: Ցաճկաց և պարսից սահմանների վրա միշտ պատրաստ են աւազակների հրոսակներ մշակների քարաւանը կողոպտելու համար: Այս տարի մի քանի անգամ կարդացինք լրագիրների մէջ, Ռուսաստանից Մուշ վերադարձող մշակների կողոպտվելը քրդերից: —Ուրեմն Թիֆլիսի մշակները ոչ իրանց վաստակած փողը պահելու տեղ ունեն և ոչ հայրենիքը հասցնելու ապահով միջոցներ: Մի փոխատու խնայողական կասսայ (ссудо—сберегательная касса) կարող էր ազատել նրանց վերոյիշեալ ամբախտութիւններից, բայց այդ մասին մինչև այսօր ոչ ոք չը մտածեց: Եթէ հայ մշակների թիւը հաշվում ենք Թիֆլիսում 5000 հոգի, մի այսքան էլ, և դուցէ աւելի, Թուրքեր, ասորիներ և ուրիշ ազգերից կը լինեն. և այս պատճառով յիշեալ հիմնարկութիւնը փողերի սակաւ շրջաբերութիւն չէր ունենայ, եթէ կազմված ևս լինէր միմիայն մշակների համար: Այլ ևս չեմ խօսում օգտաւէտութեան մասին, թէ մի այսպիսի հիմնարկութիւն որքան կարող էր նպաստել մշակների շահերին: Որովհետև փողը միշտ մշակի մօտ պահվելով, ոչ միայն կորցնում է իր տոկօսը, այլ նա կարող է միանգամով կորչել, կամ շռայլաբար ծախսվել: Քիչ չէ պատահում, որ մշակը յանկարծ մոլութեան մէջ է ընկնում, և մի քանի օրվայ մէջ ոչնչացնում է իր մի քանի տարվայ վաստակը:

Չէ կարելի չաւելացնել մի քանի խօսք մշակների հաւատարմութեան մասին: Կ. Պոլսի հայ համալների ազնիւ յատկութիւնները մինչև անգամ գրաւեցին եւրոպական մամուլի ուշադրութիւնը: Մեր մշակներն ևս պակաս չեն նրանցից իրանց բարոյական կողմերով: Հայաստանի այդ չը փչացած զաւակները սաստիկ վախենում են մեղքից, որքան սարսափում են Աստուծոյ պատժից: Պանդխտութեան մէջ անգամ, օտար հասարակութեան մոլորեցնող ազդեցութեան ներքոյ, նրանք պահպանում են իրանց բնաւորութեան մաքրութիւնը: Թիֆլիսի վաճառականը մեծ վստահութեամբ յանձնում է մշակին իր խանութի և ամբարների բանալիքները, ամենևին չը կասկածելով նրա հաւատարմութեան մասին: Ինձ յայտնի են մի քանի փաստեր, որ մշակների ձեռքը որ և է դէպքով ընկել էին դումարներ և ապրանքների հակեր, որոնց հեշտութեամբ կարող էին թաղցնել և իրանց սեպհականացնել, բայց նրանք չեն կամեցել օգուտ քաղել դէպքից, և պահելով իրանց մօտ ուրիշի սեպհականութիւնը, կրկին յանձնել են տիրոջը:

Ես վերջացրի իմ հետազօտութիւնը: Այժմ ընթերցողին եմ թողնում եզրակացնել, թէ որպիսի ապագայ է խոստանում հայ երիտասարդութիւնը:

Մելքզադէ

---

* Ինձ Զուլֆայի կարանտինայում ասեցին, թէ ամեն տարի մօտ 20 հազար մշակներ անցնում են Պարսկաստանից դէպի Կովկասի զանազան դաւառները. այս հաշով որքան հոգի անց կը կենան Արաքսի վրա դրված ռուսաց միւս կարանտինների անցքերից, որպէս են Ջաբրայէլի, Շահթախտի, Իգդիրի և միւս անցքերը: Հետաքրքիր կը լինէր թուանշաններ հաւաքել այս տեղերից, և այն ժամանակ կը բացատրվէր Պարսկաստանից և Ցաճկաստանից ռուսաց հողի վրա անցնող մշակների ճիշտ թիւը:

Թիֆլիս և մենք միշտ զրկված կը լինէինք լաւ երգեցողութիւն կամ լաւ երաժշտութիւն լսելուց, որովհետև ոչ Մէնշիկովա, ոչ Արտոու Պադիլլա, ոչ Վենիավսկի, ոչ Ռուբինշտայն չէին համաձայնվի այդպէս կողոպտված լինել և պ. Պալմի համար իշի մշակութիւն անել:

Եթէ ամբողջ Թիֆլիսում բացի պ. Պալմի Թատրոնից ուրիշ Թատրոն չը լինէր, Թիֆլիսցիները կարող էին յաւիտեանս յաւիտենից մնաս բարև ասել բոլոր երաժշտական տաղանդներին, որոնք այժմ գոնէ ժամանակ առ ժամանակ գալիս են մեզ մօտ: Ով կը համաձայնվի բիսկ անել գիշերվայ համար 300—500 ռուբլ վճարել հաւատացած էլ չը լինելով որ լաւ արդիւնք կունենայ, մանաւանդ աչքի առջև ունենալով որքան օտարոտի է Թիֆլիսի հասարակութեան մեծամասնութեան ճաշակը: Նոյն Թիֆլիսի հայ հասարակութիւնը, որ իրան կարծում է երաժշտութեան գնահատող, կատաղած ծափահարում է Սիրանուշին կամ իշխանուհի Ենգալիչեվային, բայց արհամարում է լսել տ. Արտոի պէս աշխարհահռչակ երգչուհու: Նոյն Արծրունու Թատրոնը (որ այժմ բէցէնզէնտի ասելով անպիտան է) կատարելապէս լի էր լինում երբ նրա բեմի վրա երգում էին տ. տ. ԴէկէրՇէնկ և Ենգալիչեվա, չը նայելով որ գները շատ քիչով էին զանազանվում Արտոի կոնցերտի գներից:

«Тифл. Вѣстн.» լրագրի բէցէնզէնտը ասում է, որ Թիֆլիս սովոր է լաւ երգեցողութեան: Ի հարկէ մենք էլ գիտենք որ Եւրոպայում կան տ. Արտոից եթէ ոչ աւելի բարձր, գոնէ աւելի յայտնի տաղանդներ, ինչպէս օրինակ Պատտի և Նիլսոն, բայց այնուամենայնիւ ինչքան Թիֆլիս գոյութիւն ունի մենք համարձակութեամբ կարող ենք ասել, որ տիկին Արտոի պէս երգչուհի և պ. Պադիլլայի պէս երգիչ երբէք առիթ չենք ունեցել լսել:

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 17 Նոյեմբերի

Վ. Ագուլիսի ձեր թղթակիցներից մէկը «Մշակի» № 199 ում ի միջի այլոց անտեղի կերպով յարձակվում է իմ վրա՝ ասելով, իբր ես 1000 պուդից աւելի ցորեն ունեմ տանս ամբարած, որպէս զի թանգութեան ժամանակ ծախելով ժողովրդի տարաբաղդութիւնից օգուտ քաղեմ:

Ես չը կամենալով նոյն կերպով անպատուել թղթակցի անձնաւորութիւնը, միայն ինձ արդարացնելու համար հասարակութեան առաջ, յայտնում եմ հրապարակով և իրաւունք եմ տալիս Ագուլիսի հասարակութեան, որ գան իմ տուն, կամ այն տեղերը որտեղ կարծում են թէ ցորեն կունենամ, փնտռեն, եթէ կը գտնեն իմ մի տարվայ չափ հարկաւորութիւնից աւելի ցորեն, այն ժամանակ թող մնացածը բաժանեն աղքատներին և բացի դրանից այդ աւելորդ ցորենի վրա աւելացնում եմ և 100 ռուբլի նոյնպէս նոյն նպատակի համար...Եթէ ոչ, այն ժամանակ կը խնդրէի թղթակցից, որ այդքան զումար ես ինքը բաժանել չքաւորներին, և յօդուած գրելու ժամանակ աւելի համեստ և ճշմարտախօս լինի...Երկրորդ եթէ ագուլեցիներից մէկը վկայի թէ ես մինչև օրս մէկի վրա ցորեն եմ ծախել, կամ ծախում եմ, այն ժամանակ թող պարոն թղթակիցը այդ մասին ինձ մեղադրի:

Վերջացնելով գրածս, խնդրեմ այս նամակիս տեղի տալ ձեր լրագրի էջերում, որպէս զի արդարութիւնը երևայ հասարակութեան առաջ....

Մ. Ա. Համբարձումեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 26 Նոյեմբերի

«Մշակ» լրագրի համարներից է մեկում կարդացինք ինձ վերաբերեալ մէկ նամակ, որի մէջ ասուած էր իբր թէ ես հարստահարում կամ ենթարկում եմ զանազան տուգանաց տաճկահպատակ հայթուխներին, այդ ամենը սուտ է *): Իսկ ինչ որ կը վերաբերի այն փողերին, որ բողոքողներից մի քանիսը հատուցած են յօգուտ արհեստական վարչութեան, այդ պահանջմունքները լինում են համաձայն հետեւեալ օրէնքաց. Т. XI. Ч. II. 80, 164, 182, և 184 ст. ст. уст. Ремесленсаго.

Ստարշինա Աբրահամ Խուցիեվ.

—

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Նոյեմբերի 26-ին Արծրունու թատրոնում եղաւ տիկին Արտոի և պ. Պադիլլայի երրորդ կոնցերտ: Հասարակութիւնը որ աւելի բազմաթիւ էր քան թէ երկրորդ կոնցերտի ժամանակ, ոգևորութեամբ ծափահարում էր աշխարհահռչակ արտիստներին: Կոնցերտի պրոգրամման շատ բազմակողմանի էր: Տիկին Արտո ցոյց տուեց իր ամբողջ տաղանդը. նա նոյնքան հիացրեց մեզ երգելով կլասիկային Գլուկի գրուածքը, որքան Շոպէնի մազուրկան և ֆրանսիական ու ռուսաց romances: Թիֆլիսը երբէք չէ լսել և երեի երկար ժամանակ չի լսի տ. Արտոի և պ. Պադիլլայի պէս երգիչներին: Երիտասարդ պիանիստ պ. Շտէրն-բէրգ, մեր կարծիքով, գեղեցիկ ապագայ ունի:

—

Հինգշաբթի, 29-ին Նոյեմբերի, տ. Արտոն և պ. Պադիլլա, մասնակցութեամբ պ. Շտէրն-բէրգի տալու են Արծրունու թատրոնում իրանց վերջին հրաժարական կոնցերտը:

—

Մեզ դիմում են ԹԻՖԼԻՍԻ հայերից շատերը հարցնելով, ինչի Արծրունու թատրոնի տէրերը վարձով տալիս են իրանց թատրոնը օտարազգի արտիստներին, իսկ հայ թատրոնական խմբին չեն տուել: Շատերը սկսում են նորից լուրեր տարածել իբր թէ մենք շատ ենք պահանջել հայոց թատրոնական կոմիտէից: Պարոններից մինը մինչև անգամ բացականչեց «ահա ձեզ ազգասէր Արծրունին, օտարներին տալիս է թատրոն, իսկ հայերին չէ տալիս»: Դրան մենք կը պատասխանենք երկու խօսքով միայն. մենք յիշեցնում ենք մեր ընթերցողներին որ թատրոնի տէրերը նախ առաջարկել էին իրանց թատրոնը հայոց կոմիտէին քսան պրոցէնտով զիշերվայ եկամուտից, իսկ յետոյ առաջարկել են իրանց թատրոնը նոյն կոմիտէին մի ամբողջ տարով, չարաթը մի անգամ, կատարելապէս անվարձ: Բայց այդ պայմաններն էլ կոմիտէը ձեռնտու չէ համարել իր համար:

—

«Тифл. Объявленія» թերթը խօսելով անդրկովկասեան Պրիկազի մասին, շատ ուղիղ է նկատում որ այդ հիմնարկութեան փակվելը շատ ըզգալի կը լինէր թէ քաղաքային կալուածատէրերին և թէ մանաւանդ քաղաքիս աղքատ աղգաբնակութեան: Իր հայեացքը գործի վրա ունս թերթը թէև կարճ նկատողութեան մէջ շատ հասկանալի կերպով է բացատրում: Այդ հարցի մասին մենք էլ կաշխատենք խօսել մեր լրագրի հետեւեալ համարներից մինում:

—

Մեզ խնդրում են յայտնել որ խալացի պ. Գրացիոզի նորերումս բաց է արել Թիֆլիսում պար սովորեցնելու համար մի դպրոց: Պ. Գրացիոզի բնակարանը գտնվում է Ստարայա Կոմէնդանտսկայա փողոցի վրա, № 17, Անանովի տանը:

—

Շնորհակալութեամբ ստացանք Կ. Պոլսից «Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածը» վերնագրով ֆրանսերէն բրոշիւրի երկրորդ մասը:

—

Մեզ հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻ արհեստաւորների վարչութեան գլխաւոր պ. կապանաձէ, լսելով պ. Խուցիեվի վարմունքի մասին տաճկահպատակ հայթուխների հետ, առաջարկել է այս վերջիններին գանգատվել իրան և պ. Խուցիեվի ապօրինի կերպով հայթուխներից վերցրած փողը յետ ստանալ, բայց տաճկահպատակ հայթուխները մտադիր են իրանց հիւպատոսի միջնորդութեամբ գործը Թիֆլիսի նահանգապետին հասցնել: Ցանկալի կը լինէր, որ պ. կապանաձէ, իբրև մի անձն, որին յայտնի է արհեստաւորների վարչութեան կանոնները, մեզ մանրամասն տեղեկութիւն տար պ. Խուցիեվի վարմունքի մասին:

*) Մեր կարծիքով պ. Խուցիեվի պատասխանը բաւական թերի է: Մեր լրագրի մէջ յայտնած փաստերին նա չէ պատասխանում:

Խմբ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՄՕՍԿՎԱ, 25 Նոյեմբերի: Ահա այն տան նկարագիրը, ուր մեքենայվում էր չարագործութիւնը, որ վերջացաւ 19 Նոյեմբերի սարսափելի անցքով: Փնտռթենից երևաց, որ ճայթիւնից յետոյ, պօլիցիան իսկոյն շրջապատեց մծակայ տները: Հարևան երկյարկանի տան դռները փակված էին. նրա պատուհանների մէջ երևում էր լոյս: Դրան զարկին, ոչ ոք ձայն չը տուեց: Պօլիցիականները պտտվեցան տան շուրջը, մտան երևի դռնից գաւիթը, անցնելով մի հին ցանկապատից: Ներքևի յարկի պատուհանները պատած էին տախտակներով: Վերևի յարկը լուսաւորված էր: Պոլիցիական օֆիցերը քաղաքապահ զինուորների հետ միասին, բարձրացաւ սանդուխտով, բաց արաւ դուռը և մտաւ խոհանոց, որտեղ ռուսաց վառարանի վրա, ուղիղ դրան հանդէպ, նստած էր տան մէջ գտնված միակ կենդանի էակը, սպիտակ կատուն: Խոհանոցից օֆիցէրը զգուշութեամբ մտաւ հետևեալ սենեակը և այնտեղ ճաշի սեղանի վրա ծխրտում էր մոմը, դրված էր մի շիշ գինու մնացորդներով և մի այլ շիշ լի արաղով: Այդտեղ ընկած էր երկաթի թելի (մանթուլի) մի կտոր և երկու ունելներ, իսկ սենեակի աջ անկիւնում Նիկողայոս Հրաշագործի պատկերի հանդէպ վառվում էր մի կանթեղ: Զախ պատի վրա կառված էին պատկերներ Կայսր, Կայսրուհու և Թագաժառանգի, իսկ աջ պատի վրա միտրոպոլիտ Մակարիոսի պատկերը. Սեղանի վերև երևում էր պատկերը որի մէջ նկարված էր Թագաւոր Կայսրի այցելութիւնը վիրաւորվածներին պատերազմական հիւանդանոցի մէջ: Հետևեալ սենեակում վառվում էր մի կանդեղ Փրկչի և Աստուածածնի տակեզօծ պատկերների առջև: Մի պատկերի առջև դրված էր մի դեռ ևս չը վառված ոսկեզօծ մոմ: Պատկերի տակ դրված էր մի կարմիր սնդուկ: Այդ սենեակում կային մի քանի աթոռներ, մի հայելի, մի լայն անկողին, որի վրա անփոյթ կերպով զցած էր կանացի բրդեղէն թաշկինակ: Անկողնի ետևից պատի վրա կախված էին կանացի զգեստներ: Երրորդ սենեակում կար դիվան, կային աթոռներ, իսկ անկիւնում Աստուածամոր պատկերը: Յանկապատի մէջ, սարայի մօտ յայտնվեցաւ մի լուսամուտ մէկ ու կէս վերշոկ մեծութեամբ: Նորա մէջ կային մեծաղի երկու լիթեղներ, որոնք վերջանում էին երկու երկաթի թելերով: Պարզ է, որ այդտեղից հընկում էին գնացքի մոտենալուն: Երբ լոկոմոտիվը անցաւ սարայի մօտ, ժանգոտած թիթեղները միացած էին. Սարայի կողքի պատի մէջ նոր կարած լուսամուտ յայտնվեցաւ, որի միջով անհետացել էր թիթեղները միացնող մարդը: Ստորերկրեայ անցքը, որ մի սաժէն խորութեամբ էր փորված, տախտակներով էր պատած: Անկիւնի տակ վերևից ամրացրած էր երկաթէ թիթեղե մի խողովակ ջրի անցնելու համար, որ միացած էր տան ռուսական վառարանի հետ: Այդ խողովակը վենտիլիացիայի համար էր ծառայում և ժանգից պահպանել էր խողովակի մէջ անցկացրած երկաթէ թելը: Անցքի յատակի վրա տախտակ էր դրած, որի վրայով երկաթէ ամանների մէջ ձեռքի փոքրի սայլակով դուրս էին տարել հողը: Փորված անցքը ոլոր մոլոր է գնում և վերջանում է քարէ յատակ պատով, որ շինված էր ճայթիւնի այժը կենտրոնացնելու համար: Կարծում են, որ պատի տարածութիւնը մտադրվածից սխալ է հաշված, եթէ նա կէս արշին աւելի հեռու լինէր, ամբողջ ճանապարհը կը ճայթէր: Նոյեմբերի 21-ին ճանապարհը ուղղելու համար աշխատում էին չորս հարիւր մարդ: Երեկոյեան ժամի չորսին շարժումը ճանապարհի վրա վերականգնած էր:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 Նոյեմբերի: «С. Петербургскія Вѣдомости» լրագրի հատուկ ծախելը թոյլ է տրված:

ՍՕՖԻԱ, 25 Նոյեմբերի: Ժողովի արձակելու պատճառով ընդդիմադրական կուսակցութիւնը անսահման շփոթված է:

ՑԵՏԻՆԻԷ, 26 Նոյեմբերի: Վելիկոյի մօտ չէրնոգորցիների և ալբանցիների մէջ արիւնահեղ կռիւ պատահեցաւ: Ալբանցիները յետ են մղված:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1880 ГОДЪ ТРЕТІЙ 1880

ОТКРЫТА ПОДПИСКА НА

„СВѢТЪ И ТѢНИ“ еженедѣльный художественный ЖУРНАЛЪ СЪ КАРРИКАТУРАМИ.

„МІРСКОЙ ТОЛКЪ“ еженедѣльный политическій И ЛИТЕРАТУРНЫЙ ЖУРНАЛЪ

Годовая цѣна на оба изданія съ доставкою и пересылкою—12 руб.: полугодовая—7 руб.

Въ будущемъ, 1880 году, журналы „СВѢТЪ и ТѢНИ“ и „МІРСКОЙ ТОЛКЪ“ будутъ выходить, также какъ и въ настоящемъ, еженедѣльно, въ форматѣ большихъ заграничныхъ иллюстрацій, по той-же программѣ, но въ увеличенномъ объемѣ и съ многими улучшеніями, въ какъ рисункахъ, такъ и въ текстѣ,—первый исключительно преслѣдуя вопросы чисто-художественные, второй—политическіе, общественные, научные и литературные. Такимъ образомъ, оба эти изданія, составляя какъ бы одно цѣлое и обнимая, въ совокупности, всѣ отрасли общественной жизни, политики, литературы, наукъ и исскуства, въ состояніи замѣнить собой, для лицъ не имѣющихъ средствъ подписываться на нѣсколько отдѣльныхъ изданій, одновременно и еженедѣльную политическую газету, и журналъ спеціально-художественный, съ тремя дорогими преміями и массой отдѣлныхъ приложеній, и журналъ каррикатурный и юмористическій, и, наконецъ, **толстый ежемѣсячный журналъ переводныхъ повѣстей и романовъ.**

Согласно съ этой программой въ годовое изданіе журнала „СВѢТЪ и ТѢНИ“ войдетъ: 1) Сто страницъ бол. формата каррикатуръ, иллюминованныхъ красками.—2) Отъ четырехъ до пяти сотъ каррикатуръ мелкихъ.—3 Пятьдесятъ, отпечатанныхъ въ нѣсколько тоновъ, отдѣлныхъ картинъ.—4 Большо снабженный изящной обложкой, альбомъ, заключающій въ себѣ шесть оригинальныхъ, исполненныхъ, по заказу редакціи, эскизовъ академика К. А. Трутовскаго.—5) Такой-же альбомъ, составленный изъ оригинальныхъ работъ др. извѣстнѣйшихъ русскихъ художниковъ; и 6) безплатная годовая премія—большая, исполненная, заграницей олеографія.

Въ журналѣ „Свѣтъ и Тѣни“ примутъ участіе извѣстніе русскіе художники: Гг. **С. И. Грибковъ. В. Н. Маковскій, Н. В. Невревъ, В. Г. Перовъ, В. Д. Полѣновъ, Е. И. Рѣпинъ, К. А. Трутовскій, Ѳ. И. Ясновскій** и др.; декораторъ Импер. Театровъ К. Ѳ. Вальцъ, и художники-каррикатуристы—Н. А. Богдановъ. И. М. Васильевъ, С. В. Любовниковъ, М. М. Самойловъ, Федоровъ, и многіе другіе.

Примѣчаніе 1-ое. Цѣна каждаго альбома въ отдѣльной продажѣ будетъ назначена не менѣе 3 р., а годовой преміи, также какъ и въ настоящемъ году—5 р.

Примѣчаніе 2-ое. Всѣ гг. вновь подписавшіеся при требованіи премій 1878 и 79 гг.—олеографій „На медвѣжьей охотѣ“—и „Штормъ на морѣ“ благоволятъ прилагать къ подписной суммѣ: два р., вмѣсто трехъ—за первую, и четыре, вмѣсто пяти—за вторую.

Журналъ „МІРСКОЙ ТОЛКЪ“ (изданіе безцензурное), по примѣру нынѣшняго года, имѣетъ предложить читателямъ: 1) передовые статьи; 2) правительственныя распоряженія; 3) вѣсти изъ за границы; 4) жизнь нащихъ провинцій; 5) слухи и сообщенія; 6) фельетоны—общественной жизни, московскіи, театральный м музыкальный; 7) обозрѣніе нашей печати; 8) романы, повѣсти и пьесы; 9) стихотворенія; 10) смѣсь, и 11) юмористическій листокъ.

Кромѣ того, журналъ „МІРСКОЙ ТОЛКЪ“ съ января 1880 г. будетъ выдавать всѣмъ подписчикамъ БЕЗПЛАТНО, какъ приложеніе, 12 КНИГЪ, (по книгѣ въ мѣсяцъ; отъ 250 до 300 страницъ въ каждой) избранныхъ романовъ, повѣстей и разсказовъ. За это изданіе гг. подписчики высылаютъ только 1 рубль на укупорку и почтовые расходы. Въ отдѣльной продажѣ цѣна каждой книги 1 рубль.

Въ текстѣ самаго журнала „Мірской Толкъ“ будутъ напечатаны, между прочими: новая комедія **В. Балуцкаго**, „Родственники“, увѣнчанная преміею Краковской академіи; историческія трагедія „Дженъ Шоръ“ **Н. Байрона**; нѣсколько отрывковъ изъ пьесы „Король забавляется“ (Le roi s'amuse) **Виктора Гюго**, въ стихотворномъ переводѣ **Н. Л. Пушкарева**, историческій романъ Гр. С—ова—„Старой вѣры хранители“ и т. д. Помѣщены будутъ, конечно, по мѣрѣ выхода ихъ, и новыя произведенія знаменитыхъ романистовъ Запада: **Золя, Гонкура, Шпильгагена, Ауербаха, Ришпена, Генри Удъ** и друг.

Подписная цѣна на оба изданія

На годъ съ доставкою и пересылкой . . . . . 12 р.
„ полгода „ „ „ . . . . . 7 р.

Примѣчаніе. Разсрочка платежей подписной суммы допускается: или за поручительствомъ гг. казначеевъ или по третямъ, съ обязательнымъ взносомъ первой—при подпискѣ, второй—не позднѣе 15 марта и послѣдней—15 іюля. Полугодовые подписчики правомъ на полученіе годовой преміи не пользуются.

Подписка принимается; въ **Москвѣ въ Главной конторѣ** журналовъ **„Мірской Толкъ“ и „Свѣтъ и Тѣни“** (Петровка, д. Товарищества Петровскихъ линій, № 15), куда благоволятъ адресовать свои требованія и гг. иногородные.

Съ **10 ОКТЯБРЯ НАСТОЯЩАГО** года, для большаго удобства г. г. подписчиковъ, при Главной Конторѣ журналовъ „Мірской Толкъ“ и „Свѣтъ и Тѣни“ открытъ КНИЖНЫЙ и КАРТИННЫЙ МАГАЗИНЪ, съ пріемомъ объявленій и подписки и на всѣ другія русскія періодическія изданія, а при редакціи имѣется собственная ТИПОГРАФІЯ и ХРОМОЛИТОГРАФІЯ. Всѣ заказѣ и требованія гг. иногородныхъ, какъ книжнымъ магазиномъ, такъ и типографіей, исполняются немедленно и аккуратно. Гг. подписчики на „Мірской Толкъ“ и „Свѣтъ и Тѣни“ при выпискѣ изъ магазина книгъ и картинъ, или заказовъ типографскихъ и литографскихъ работъ, за пересылку ничего не платятъ, а при помѣщеніи въ текстѣ названныхъ журналовъ какихъ либо публикацій пользуются уступкой 20%

Редакторъ-Издатель **Н. Л. Пушкаревъ**

«МОДНЫЙ БАЗАРЪ» խանութում ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷՈՒՄ մեծ զիջումով ծախվում են. կաշեմիրի կանանց սև շորեր, ամենանոր ձևի, ձմերային գլխարկներ, փեռուներ, զանազան ծաղիկներ բալի շորերի համար, գլխի զարդարանքներ, ժապաւէններ, կորսետներ, ձմերային սնային հողաթափներ, տղամարդկերանց ցիլինդրներ: Նոյն տեղը պատուէրներ են ընդունվում կանանց գլխարկների և գլխի ուրիշ զարդարանքների համար:

1—3

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1880 годъ

НА ЕЖЕДНЕВНУЮ, БЕЗЦЕНЗУРНУЮ, ПОЛИТИЧЕСКУЮ И ОБЩЕСТВЕННУЮ ГАЗЕТУ

„РУССКІЙ КУРЬЕРЪ“

Газета будетъ выходить ежедневно, въ форматѣ нашихъ большихъ газетъ, по слѣдующей програмѣ: постановленія и распоряженія правительства; телеграммы, обзоръ политическихъ событій и общественной жизни; обсужденіе вопросовъ дня; военныя извѣстія; мнѣнія русской и иностранной печати по данному вопросу и сущность руководящихъ статей; иностранныя извѣстія по русскимъ и заграничнымъ источникамъ; извѣстія изъ славянскихъ земель. Жизнь Россіи: наши домашнія дѣла; корреспонденціи; народное образованіе; внутреннія извѣстія; хроника; хроника научная, литературная и художественная: театральныя и музыкальныя извѣстія; судебная хроника. Историческій листокъ; разныя извѣстія; биржевыя, желѣзно-дорожныя, торговыя и др. эвѣдѣнія; справочныя извѣстія.

Подписная цѣна съ пересылкой и доставкой въ Москвѣ и на города:

На годъ . . . . . 6 руб.
„ полгода . . . . . 4 „
„ 3 мѣсяца . . . . . 3 „
„ 1 мѣсяцъ . . . . . 1 „

За границу плата вдвое.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: въ Москвѣ, въ конторѣ редакціи газеты „РУССКІЙ КУРЬЕРЪ.“ Столешниковъ пер., д. Рожнова; въ конторѣ изданія газеты—у Москворѣцкаго моста, въ д. **Н. П. Ланина**, въ его конторѣ, и у всѣхъ извѣстнихъ книгопродавцевъ Москвы въ С.—Петербургѣ—въ книжномъ магазинѣ Исакова и картографическомъ заведеніи Ильина.

Гг. иногородные благоволятъ адресовать свои требованія исключительно въ контору изданія газеты „РУССКІЙ КУРЬЕРЪ“—Москва, Москварѣцкій мостъ, домъ Ланина, при его конторѣ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

բոլոր եւրոպական լրագիրների համար Մոսկվայում (Центральная контора объявленій для всѣхъ европейскихъ газетъ въ Москвѣ, Большая Дмитровка, д. Бучумова) ԸՆԴՈՒՆՈՒՄ Է *յայտարարութիւններ* ԲՈԼՈՐ *ռուս և արտասահմանեան* ԼՐԱԳԻՐՆԵՐԻ *համար խմբագրական* ԳՆԵՐՈՎ, *նշանաւոր* ԶԻՋՈՒՄՆԵՐՈՎ:

Ռուսաց ամենօրեայ, շաբաթական, պատկերազարդ և ծաղրական լրագիրների ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ: ԱՄԵՆՈՐԵԱՅ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ *ունի բոլոր ռուսաց և արտասահմանեան* ԼՐԱԳԻՐՆԵՐԻ *հետ:* Յայտարարութիւններ *ընդունվում են նոյնպէս բոլոր գաւառական լրագիրների համար:* Թարգմանութիւնները ՁՐԻ ԵՆ *լինում:* Իւրաքանչիւր *յայտարարութեան համար* ԱՊԱՅՈՒՅԱԿԱՆ № *է ուղարկվում:*

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՎԱՐՁ ԵՆ ԿԱԶՄՎՈՒՄ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ *ընդունվում է բոլոր լրագիրների համար:*

8—15 (4)

Գունիբեան հրապարակի վրա, ցիրկի աջ կողմը, բացված է մեծ թանգարան «ՆՈՐՈՒԹԻՒՆ»

Այս թանգարանը պարունակում է իր մէջ հազար տեսակից աւելի առարկաներ, նրանց թւում մինչև 500 լուսագրաւոր (стереоскопическихъ) *տեսարաններ:*

Մուզէումի մէջ գտնված առարկաների մէջ մանաւանդ նշանաւոր են՝ գլխահատ մեքենան. հնդկական խորան ծիծաղելու համար, մի արկղիկ երգող կօլիբրիով (թռչուն), մեքենական կուկրու�թռչուն, էդիսոնի ֆոնոգրաֆ խօսող մեքենա, նշանաւոր մարդկերանց կիսարձաններ, երգող մեքենայական թռչուններ, մեղէդի ֆիգուրաներ և այլն:

Մուտքի գինը 30 կ.: Երեխաները 20 կոպէկ են վճարում:

ԹԻՖԼԻՍԻ ԲՈԼՈՐ ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ ՄՕՏ ԾԱԽՎՈՒՄ ԵՆ՝

Երկու Բարեկամ. գործ Օտտակար Ըսուպպիացի . . . . . գ. է 25 կ.
Ընկ՝ վէպ Ֆրանց Հոֆմանի. գ. է 40 կ.

ապագրութեան համար արդէն պատրաստ է Ֆրանսիական մատենագիր Էմիլ Գաբօրիոյի «Լ'Հ կ օ.ք» վէպը, որ բաղկ. է 450 երեսից:

Պատրաստվում է տպագրութեան համար Շէկսպերի «Օ տ ա է լ օ» ողբերգութեան Հայ Թարգմանութիւնը:

3—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *յայտնում է, որ իր ներկայութեամբ լինելու են հետևեալ վճռական աճուրդները առանց կրկնաճուրդի. 1) Նոյեմբերի 24 Հալաթարի քաղաքային ամարանոցի մի բաժինը 1890 դեսեատին մեծութեամբ և մի ուրիշ բաժինը 257 դեսեատին մեծութեամբ կապալով տալու: Ժամանակամիջոցը 1880 թ. յունվարից մինչև 1883 թ. յունվար: 2) Դեկտեմբերի 7 (1879 թ.) Կուր գետի վրա քաղաքի դիմ մէջ բերվող գերանների եկամուտի ըսանալը կապալով է տրվելու: Ժամանակամիջոցը 1880 թ. յունվարի 26-ից մինչև 1883 թ. յունվարը: 3) Դեկտեմբերի 7-ին 1879 թ. Վերայից վերև գտնված նաւը կապալով տալու համար: Ժամանակամիջոցը 1880 թ. յունվարի 26-ից մինչև 1883 թ. յունվարը: 4) Դեկտեմբերի 4-ին 1879 թ. կառապաններից ստացված եկամուտը կապալով տալու համար: Ժամանակամիջոցը 1880 թ. յունվարից մինչև 1883 թ. յունվարը: 5) Դեկտեմբերի 1-ին 1879 թ. ձիաներից յոգուտ քաղաքի ստացված մուտքը կապալով տալու ժամանակամիջոցը 1880 թուականի յունվարի 1-ից մինչև 1883 թուականը: 6) Դեկտեմբերի 5-ին 1879 թ. քաղաքային կշիռքից ստացված եկամուտը կապալով տալու համար: Ժամանակամիջոցը 1880 թ. յունվարի 26-ից, մինչև 1883 թ. յունվարի 1-ը: Այս բոլոր կապալների պայմանները ցանկացողները կարող են տեսնել քաղաքային վարչութեան մէջ ամեն օր, բացի տօն օրերից առաւօտեան 10 ժամից մինչև 2-ը կէս օրից յետոյ:*

6—9

Մի երիտասարդ, որ երկար ժամանակէ ի վեր պարապել է պրատիկայով, կամենում է մասնաւոր ընտանիքներում կամ ուսումնարաններում կրկնութիւններ անել գիմնազիական բոլոր առարկաներից: Հասցէն հարցնել «Մրշակի» խմբագրատանը:

Дозволено Цензурою 27 Ноября 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона